

տոնեայ մայրապետներու լեհական վանքի մը մէջ: Գիշեր մը երազին մէջ լսած էր ծնողքին ձայնը, որ զինք կը կոչէր հայրենի կրօնին եւ մերկ վիճակի մէջ նեւտուած զերեզմանատուն: Տեղացի հրէաներ, լսելով այս մասին, փախուցած էին զինք Ամսթերտամ՝ ազգականներու մօտ: Այնտեղի քաղաքականներ անոր մարմնոյն վրայ տեսած էին այլեւայլ նշաններ, որոնք ցոյց կուտային թէ Սարա նախասահմանուած է դայիք Մեսիայի կէնն ըլլալու:

Սաղաթայ, լսելով այս կնոջ մասին, պատգամաւորներ զրկեց Լիվօնո, ուր բնակութիւն հաստատած էր Սարա եւ զայն հրաւիրեց Եզրիպտոս: Առաջին տեսակցութեան իսկ Սէվի բռնկեցաւ անոր սիրովը եւ ամուսնացաւ հետը:

Իր կնոջ եւ աշակերտներուն հետ Սաղաթայ Սէվի այցելեց Պաղեստին եւ Սիւրիա: Գաղացի զրազէտ զպիր մը հաւատաց իրեն եւ նամակներ գրեց աշխարհի բոլոր հրէայ համայնքներուն, թէ մօտ օրէն պիտի յայտնուի Մեսիան... Երուսաղէմի, Հալէպի եւ առ հասարակ իր այցելած բոլոր քաղաքներուն մէջ Սաղաթայ ընդունուեցաւ խանդավառութեամբ: Երբ հասաւ իր ծննդավայրն՝ Իզմիր, ուրիշ վստասած էր քանի մը տարիներ առաջ, ժողովուրդի խանդավառութիւնն իր զաւաթնակէտին հասած էր, որովհետեւ քանի մը ամիս մնացած էր 1666 բարերաստիկ թուականին:

Եւ ահա Հոկտեմբեր ամսոյ շարաթ օր մը Սաղաթայ Սէվի սինակօկին մէջ ի լուր աշխարհին յայտարարեց, թէ ինք Մեսիան է: Ներկայ բազմութիւնը միաբերան ազազակեց. «Կեցցէ՛ Իսրայէլի փրկիչ թագաւորը, կեցցէ Աստուծոյ զրկած Մեսիան»: Հաւաքական յափշտակութեամբ համակուեցաւ Իզմիրի հրէայ համայնքը: Այժ քրքրածի կը նայէր, եւ ամէնքը պատրաստութիւն կը տեսնէին Սուրբ Երկիրը վերադառնալու: Տասնէն տասնեկու տարուան բոլոր տղաքը կ'ամուսնացնէին, որպէսզի անմարմին հոգիներուն բնակարան հայթայթուի, եւ Մեսիայի զահակաւորութեան յաղաղման օրեւէ պատճառ չի տրուի:

Սաղաթայ Մեսիայի համբաւը տարածուեցաւ Եւրոպայի բոլոր կէթթօններուն մէջ:

Շատեր ծոմ կը բռնէին կամ մարմինն չարչարանքի կ'ենթարկէին Մեծ օրուան արժանի ըլլալու համար: Շատ մը դրամատուներ փակեցին իրենց դռները, եւ ամէն կողմերէ պատգամաւորներ կուգային Իզմիր Մեսիան անձամբ ողջունելու եւ իրենց հարստութիւնն անոր տրամադրութեան տակ զնելու համար: Ինքն ալ իր պատգամները կը ստորագրէր՝ «Ես, Տէրը, Ձեր Աստուածը, Սաղաթայ Սէվի»:

Հրէաները մէկ բան միայն հաշուած չէին: Կ. Պոլսոյ Սուլթանը պիտի հաճէ՞ր իր նահանգներէն երկուքը մեր Սաղաթային յանձնելու:

Իր կնոջ հետ Սէվի 1665-ի վերջերը ճամբայ ելաւ Պոլիս երթալու համար: Հաղիւ թէ նաւը Ոսկեղջիւրի մէջ խարխալ նետած էր, թուրք ոստիկաններ ձերբակալեցին զայն եւ շղթայակապ բանտ առաջնորդեցին: Երբ Մեծ Եղարջոսը մէկ երեսին ապտակ զարկաւ, Սաղաթայ, Յիսուսի հաեւեղութեամբ, միւսը դարձուց. Պոլսէն Սաղաթայը փոխադրեցին Ապիտոսի բերդաքաղաքը, Տարտանէլի վրայ:

Այնտեղ ան ապրեցաւ իշխանական կեանքով: Աշխարհի ամէն կողմերէն ուխտադնացութեան կուգային բանտարկուած ասածուն եւ կաշառուած պաճապանները թող կուտային, որ ուխտաւորները անձամբ ներկայանան յոտս ատուածային զահուն:

Վերջ ի վերջոյ Սուլթանն յուզուեցաւ եւ Ապիտոսէն զայն փոխադրեց Ազրիանապոլիս: Այնտեղ Սաղաթայ ստիպուեցաւ իսլամութիւն ընդունիլ եւ ի վարձ իր այդ հաւատարմութեան Մուհամմէտ Գ. անոր պաշտօն տուաւ: Կ. Պոլսոյ Սէրային մէջ, պատկառելի թոշակով մը:

Մեծ յուսախաբութիւն կէթթօններուն մէջ. ատուած մահճետականութիւն ընդունած էր... Բայց չէ՞ որ Մովսէս ալ Փարաւոններու մօտ ապրած էր իրր եզրիպտացի... Այսօր ալ կան տակաւին հրէաներ, որ կ'ըսեն, թէ Սաղաթայ Սէվի մեռած չէ... թէեւ պաշտօնական վաւերաթղթեր կան որ կը հաստատեն, թէ ան իր կեանքի վերջին օրերն անցուցած է